



ՀԱՏՈՐ Ծ

1892

ՅՈՒԼԻՍ

ՎԵՆԵՏԱՀԱՅ

ԺԳ

(ՏԵՍ ԴԷՂ 193)



ՆՏՈՆ, ՍՈՒՐԵԱՆ. — ԺԶ դարուն կիսուն կամ քիչ մի վերջ ի վերնետիկ գտնուած դեռ ոչ բազմաթիւ Հայոց մէջ ամենէն նշանաւորն եղած է սա, և երեսուն տարիէ աւելի զանազան դիպուածոց և պիտոյից մէջ ցուցեր է հանճարը, մեծ գործօնութեամբ և յաջողութեամբ: Իր յատուկ կամ մկրտութեան անունն է Անտոն, մականունն Սուրիան, որ կամ նոյնպէս յատուկ անուն է, և կամ թերեւս հայրենեօք Միջագետաց և Ասորոց կողմէն ըլլալով՝ այսպէս կոչուած ըլլայ յիտալացոց, որք Սիւրիա կամ Սուրիա կ'անուանեն այն կողմերը. արդ դիւանաց մէջ կը գրուի սա Antonio Suriano detto l'Armeno (Անտոն Սուրիան՝ կոչեցեալն Հայ): Հօրը անունն ալ ծանօթ է, Յովսէփ⁽¹⁾: Ե՛րբ կամ ո՞ր տարի ի վերնետիկ եկած ըլլալն՝ յայտնի չէ, այլ երիտասարդ կամ մանկահասակ եկած պիտի ըլլայ, իր բոլոր կենաց տարիքէն չափելով, որ է 58 տարի, իսկ իր անունն և գործքն 32 տարիներու մէջ կը յիշուին (1559—1594). բայց իր առաջին գործէն կամ գործոյ առաջարկութենէն զուշակուի՝ որ 1559 թուականէն ալ առաջ ծանօթ եղած է. և կը

1. Այսպէս կոչուի Հայրն նոտարական գրուածքի մի մէջ, որոյ և մականունն ալ կ'աւելցուի՝ Բժշկեան, de Medici. Իսկ պաշտօնական գրուածքի մէջ (յամի 1609) Միքայէլ կոչուի Հայրն, որ գուցէ պատճառ ըլլայ:

վկայէ իր որդին որ հայրն 40 տարի ծառայած է տէրութեան, ըսել է 18 տարեկան սկսած. ուստի և յայտ կ'ըլլայ որ 'ի վենետաց առած է իրեն ա- մուսին, և իրեն գլխաւոր գործոյ կամ արուեստին յաջորդ թողած է զաւա- կըն Յովսէփ անուամբ, ծնած իբր ի 1576 (վասն զի ի 54 տարուան ի 1630). մէկ որդին ալ յիշուի հօրմէն քանի մ'օր առաջ մեռած 11 տա- րուան, Մարկոս—Անտոն անուամբ, որ վենետաց սիրելի (երբեմն ալ ծաղ- բելի) անուն մ'է, և անով յայտնուի իր կնոջն ալ վենետկեցի ըլլալն, բայց անունը և ընտանիքը չեմ գտած:

Առաջին անգամ Անտոնի անունն և գործն ինքն իսկ յիշէ իր մէկ ա- ղերասագրին մէջ առ Դուքան վենետկոյ և առ ծերակոյտն, (ի 24 յունիսի, 1564), և եղած է երկու տարի առաջ. յամենան հոկտեմբերի 1559 տար- ւոյն առաջին աղերսագիր մ'ալ տալով՝ մեծ և դժուարին ձեռնարկութեան մի, որ որքան իրեն պատիւ կրնար բերել, եթէ ոչ նոյնքան՝ այլ և ոչ շատ պակաս ամօթ վենետաց, որք այնքան ճարտարք էին ի նաւաշինութեան, ի նաւարկութեան և ի նաւամարտի. բայց կամ երբեմն զգաստութիւնսն կը պակսէր, կամ ծովն անոր ալ կը յաղթէր, և կամ չէր բաւեր իրենց հը- նարքն՝ նաւահանգիստը ապահովցնելու յամենայն վտանգաց: Իրն այս է որ իրենց մէկ մեծ և զինեալ նաւ մի՝ Եպիտոնէ, որ հասարակ Եպիտա ըստած նաւերէն մեծ է, զէնքերով, հրետներով (թօփ), և ուրիշ ամէն կազմածով և բեռամբք ընկղմեր խորասուզեր էր նաւահանգստին մէջ, և հանելու ճար կամ ճարող մի չէր գտած, թէ և փորձեր և քննութիւններ եղած էին, այլ յուսահատեալ թողեր էին: Հաւանական է որ մեր Հայն ալ վենետի- կոյ հռչակեալ նաւարանին մէջ արուեստաւոր մ'ըլլալով, տեսեր էր ոչ մի- այն անոնց փորձերը և աչօք քններ էր նաւուն ընկղմած տեղը և դիրքը, այլ և այն փորձերուն կամ գործեաց պակասութիւնը: Ինքն այն ատեն 26 տարուան երիտասարդ մ'էր. մտածեց, վստահացաւ մտածութեանը, և աւելի ծածուկ քան յայտնի՝ նաւը հանելու գործիքի կամ շէնքի մի գաղափար կամ փորքիկը շինեց, և վերոյիշեալ թուականին (1553 հոկտ). աղերսագրով ներ- կայացուց տէրութեան գերագոյն ատենին: Ատեանն կամ դուքան թէ և ան- յարմար չտեսաւ գործիքը, բայց առջի փորձողներուն անյաջողութենէն չվստա- հանալով, ինչպիսի չմերժեց, բայց չուզեց ալ օգնել անոր՝ դրամով կամ ու- րիշ նիւթերով, այլ թողուց որ նա իր ծախքովը գործը տեսնէ. իսկ Անտոն որ այնքան մեծ գործոյ դրամական կարողութիւն չուներ, հարկաւ կը տո՛ւ- պուէր յետ կենալ: Երեւի թէ իր առաջարկութիւնն նորէն արթնցուց ու- րիշները. Բարգուլիմէ անուն նաւապետ մի յանձն առաւ իր ծախքը գոր- ծել և հանել նաւը կամ նաւուն մէջի եղածները. մեծ արկղաձեւ (Casson) գործիք մի շինեց և սկսաւ փորձել, այլ գործիքն ալ ընկղմեցաւ. նորէն մէկ մ'ալ շինեց, այն ալ առջինին պէս ընկղմած կալէտնին ընկեր եղաւ. Բար- գուլիմէ անճրկեալ՝ սկսաւ իր կորուստը հօգայ, բայց ոչ ինքն և ոչ ուրիշ անձինք իր շինածներն ալ կըրցան հանել: — Այն ատեն Անտոն նորէն

ոսք ելաւ, առաջարկեց տէրութեան պաշտօնէից, որ հրաման տան իրեն իր ծախքով հանել այն երկու արկղաձեւներուն մէկը, (որովհետեւ մէկալն ծովուն ծփանքէն քայքայուած փնայած էր), հաւանեցան պաշտօնեայք, այլ պարտաւորեցին զնա (7 մայիսի, 1564) որ ութ օր չանցած՝ ձեռք զարնէ զործոյն. քանի մի շաբաթ վերջը իրենց պաշտօնարանին գլխաւոր գործատեսներէն մէկը (Capitano dell'Officio) խաւրեցին որ տեսնէ թէ ինչ է ըրած Հայն. զնաց քննեց նա և (յունիսի 11ին) լուր բերաւ թէ Անտոն ոչ միայն հաներ է զարկղակերան, այլ և քշեր տարեր է Ս. Գէորգ կղզւոյն քով, քանի մ'ալ խոշոր նաւակներ (burchelle) բերեր է հօն, որ արկղին մէջ լցուած տիղջն ու աւազը հանեն մաքրեն : Այս գործոյ և գործեաց համար Անտոն 1000 դովատէն աւելի ծախք ըրած էր :

Հիմայ պարզ երեսով համարձակ զնաց յատեան Դքսին (3/4 յունիսի, 1564), և զրով խնդրեց նորէն հրաման՝ կալէոնն ալ հանելու, իր ծախքով. և իրաւացի պարծանօք կ'ըսէր. « Տեսնելով որ ուրիշներն ոչ միայն դժար » այլ և անկարելի համարէին այն արկղակերտները հանելու, մտածեցի որ ա- » նով ո՛րչափ փնաս պիտի ըլլայ ձեր նաւամուտքին, միանգամայն և իմ առ » քեր Պայծառութիւնն (Sua Serenità) սենցած սէր ու գորովս, և Աս- » տուծոյ ինձ տուած հանձնարս յորդորեցին որ ջանամ հնարք գտնել և հանել » ընկրմածներուն մէկը., զտայ, առաջարկեցի, հաւնեցաք, և յանձնեցիք ինձ » հանելու, և օգնութեամբ Աստուծոյ հանցի, իմ ծախքովս, և շատ դիւ- » րութեամբ, որուն զարմացան ամենքն ալ : Արդ հիմայ որ իմ կարողու- » թեանս ցոյց մի տուի քեր Պայծառութեան, կարծեմ՝ թէ քիչ մի համար- » մունք զտայ ձեր աղբււ, և թէ պիտի կարենամ յաջողել ուրիշ աւելի » դիւրին ձեռնարկութեան մ'ալ, ինչպէս կարծեմ, որ է, եթէ շնորհէք ինձ » չորս ամիս ժամանակ, հանել, իմ ծախքովս՝ կալէոնին մէջ եղած հրա- » զէնքը (artelleria), փայտերը և ալ ինչ որ կայ. բայց այս պայմանով՝ որ » հանածներս՝ իմն ըլլան, և ես ծախեմ՝ Նաւարանին՝ ինչ պատշաճ գնով » որ ուզեն : Ասկէ զատ խնդրեմ որ տրուի ինձ առանձնաշնորհութիւն, որ » մինչև 30 տարի ոչ ոք ինձմէ զատ կարենայ այս իմ ըրած գործոցս ձեռք » զարնել, ոչ մեծ և ոչ փոքր մեքենայ շինել՝ առանց իմ հաւանութեանս, » բոլոր տէրութեանդ մէջ՝ ուր ալ որ ըլլայ. և եթէ մէկն գործէ՝ պարտա- » կան ըլլայ թէ շինածը կորուսանելու և թէ 300 դովատ տուածելու, զոր » երեքի բաժնելով՝ մէկ մասն առնու այս բանիս գործադիր պաշտօնարանն, » մէկ մասը՝ Նաւարանն, երրորդն ալ ես աղերսողս, որ խոնարհարար քեր » Պայծառութեան կը նուիրեմ և կը յանձնեմ զիս » :

Նոյն օր (24 յունիս) չորս աւագ ատենակալք Դքսին կողմանէ պատուիրեցին Նաւարանի հոգցողաց, որ քննեն այս խնդիրը և իմացնեն իրենց կարծիքը : Երեք օր վերջը (27 յուն.) հոգցողքն զրով ծանուցին Դքսին, որ հաւանելի է Հայայն առաջարկութիւնն, վասն զի արկղակերտը հանելով՝ յայտնի ըրաւ իր հանձնարեց մարդ ըլլալը, (ha dimostrato di esser persona

d'ingegno). Կը վայլէ որ հրաման տրուի իրեն զործը կատարելու իր մեքենաներով. իսկ 30 տարուան առանձնաշնորհութիւնը՝ կը թողունք Դքսին կամքին: Երկրորդ օրը (28 յունիս) և զարձեալ յուլիս 7ին Երեակոտին առջև կրկին կարդացուեցան հոգցողաց զրուածքն, և քանի մ'օր վերջ (17 յուլ.), Երեակոտն՝ (ուր 147 անձինր էին) 145 քուէիւք վճնեցին՝ որ կատարուին Անտոնի խնդրածները, ինքն իր ծախուք և զործեօք հանձն հանելու լիքը և պատշաճ գնով ծախէ Նաւարանին: Դարձեալ իր խնդրոյն համեմատ՝ 30 տարի միայն ինքն շինէ այնպիսի մեքենաներ, և առանց իր հաւանութեան շինողն պատժուի և տուժէ:

Անտոնի խնդրած պայմանաժամն՝ այս վճռին օրէն սկսած՝ կը լմննար նոյեմբերի կիսուն. բայց այն միջոցին այլևայլ գէպք արգելք եղան իրեն, որ յայտնի էր ուրիշներու ալ. ուստի այս ամսոյս 10ին նորէն աղերաց Երեակոտին՝ որ իրեն տարի մ'ալ ժամանակ շնորհեն, որ ձմեռն անցնի, և կարենայ նորոգել իր խնդրած և ընդունած նաւակը (Varca), զոր իր պէտքին յարմարցուցեր էր: Նոյն օր հաւանեցաւ Երեակոտն (122 քուէով, ընդդէմ 2 միայն մերժողի): Նոյն վճիռն զարձեալ տարի մի վերջը (6 հոկտ. 1562) կրկնեցաւ, նորէն տարի մ'ալ ժամանակ շնորհելով: Դիւանական զրուածոց մէջ որ և է խնդրոց ամէն զիպուածք շին պատմութիւր, որով շեմք կըրնար գիտնալ կամ գուշակել, թէ ի՞նչ պատճառաւ ուշացաւ Անտոնի զործողութիւնն. կ'երեւի թէ զծարուութիւնն ոչ այնքան իրմէ էր՝ որքան հակառակորդներէ կամ նախանձողներէ, որք թերեւս իր կենաց ալ կը սպառնային. և զայս գուշակեմ Տասանց Ատենի (որ տէրութեան ամենէն ահաւոր ատեանն էր) տուած վճռէն յ'13 մարտի, 1562, ըստ խնդրոյ Անտոնի, որ կարենայ ի վիճետիկ թէ՛ ինքն վրան գէնք կրել և թէ իր երկու մարդիկն՝ որոց անուանքը կ'ուզէին իմանալ. նոյն վճռին մէջ կը վերկայեն ալ՝ որ այն ատեն Անտոն կ'աշխատէր Կալէոնը հանելոց, (il qual attende cavar il Galeon): Եթէ ամբողջ հանելոց կաշէոնը և երբ՝ որոշ չըսուիր, այլ անհաւան չերեւիր, որովհետեւ անկէ ետեւ շատ ընկղմած նաւեր ալ հանած է. իսկ այն կաշէոնը կամ մէջի եղածները հանելու համար մեծ գործիւտոր նաւակ մի շինեց կամ մեծ գործիք մի նաւաձեւ, որ իր յատուկ Հայ անուան պէս՝ յատկապէս Նաւակն կոչեցաւ, վարքա կամ Պարքա, (զոր և իր ազգակից Խաչատուրի լեզուով կըրնայինք Տօշպա (3) անուանել), 3500 զուկառէն աւելի ծախքով. թէ վերոյիշեալ Տասանց հրամանագրէն և թէ Յովսեփայ (Անտոնի որդւոյ) ըսածէն յայտ է որ 1562—8 տարիներուն՝ հանած էր անկէ շատ հրազէնք, խարխիւներ, փայտեր, առագաստակալներ և ուրիշ նիւթեր, որոյ վրայ զարձեալ ամենքն զարմացան:

Անտոնի գլխաւոր ճարտարութիւնն և զործն եղաւ ընկղմեալ նաւուց կամ անոնց մէջի նիւթոց հանումն ի ծովէ. միանգամայն և վիճետիկ հռչակաւոր Նաւարանին (Arsenale) մէջ պաշտօնեայ մ'եղաւ, ճարտարապետ (Inge-

1. Տես երես 201:

niere) կողմամբ. ինչուան 1589 թուականն կը յիշուին իր ինդիրքն այլևս այլ նաւահանութեանց, բայց աւելի շատն առանց թուականի յիշուած են, հաւանորէն կան ալ որ յիշուած չեն կամ մեզ անծանօթ. իսկ իր գործունէութիւնն և խնամքն իր ճարտարած սիրելի վարդապետ համար՝ մինչեւ ի 1588—9 տարին, որ է իբր երկու կամ երեք տարի միայն յառաջ քան զմահն: Այս վարդապետն ոչ միայն ճարտարութեան պարծանքն էր, այլ և անհրաժեշտ գործիք իր արուեստին և ապրուստին: Վերոյիշեալ աղերսագրէն և վճիռներէն կ'երեւի, որ ակումբիւնն թէ և կը հաւնէր, կը զարմանար, կ'օգնէր Անտոնի, բայց ոչ թերեւս առատապէս և ոչ ըստ արժանեաց նորա. և Անտոն ստիպուելով իր ծախուք շինել այնպիսի մեծ մեքենաւոր վարքայ մի, և վարձեալ իր ծախուք ուրիշ գործիներ, և վարձել իրեն աշխատակիցներ, ոչ միայն ծախքն կը ծանրանար այլ և կը ճնշէր զնա, այսինքն պարտուց տակ կը մնար⁽¹⁾: Շատ հեղ Նաւարանէն փոխ կ'առնուր այլ եւ այլ նիւթեր, բայց երբ ատենին չէր կրնար վճարել անոնց գինը կամ պարտքը, Նաւարանին գլխաւորք իր վարքայն ի գրաս կ'առնուին, մանաւանդ թէ իբրեւ դերի բռնէին, և կերպով մի ճարտարին ձեռքը կը կապէին, որով հասարակաց կամ բնկղմելոց ալ փաս կ'ըլլար: Այսպէս կ'երեւի թէ նոյն այն տարին, 1568, որ երեւելի նաւապետի կամ ժողապետի մի, ազնուական Հերոնիմոսի (Magnifico Girolamo Contarini) բնկղմած խալէին (galea) միջէն երեք հատ մեծ հրանօթներն հանել էր, (վենետիկոյ մասն համարուած երկայնաձեւ. Եւսեգա բուսած կղզւոյն դիմաց), որք 800 դուկատ կ'արժէին, և Նաւարանին բնծայեր էր ձրի, վարքայն գրաւեցաւ ի նոյն Նաւարանէն, ուսկից առած էր ճոպաններ (հաստ չուաններ) այսպիսի գործոց համար, և պարտքն էր 882 դուկատ: Ի գարնան յաջորդ տարւոյն՝ երբ աշխատութեան յաջող եղանակն եկաւ, Անտոն աղերս տուաւ Դքսին (22 ապրիլ, 1569) իր վարքայն ազատելու, մի առ մի յիշելով թէ՛ ըրած աշխատանքը, այնքան նաւուց կտորները և հրանօթները հանելը, և իր գործաւորաց վարձքը և պարտքերին վճարելը ձմեռ ատեն, երբ աշխատանք դադարած էին, մինչ անոնցմէ ոմանք պարտքերնէն ազատելով՝ քովէն փախան. իսկ ինքն իր պարտուց փոխան իր ծախուք՝ նաւահանղըտին բերանը մաքրել էր՝ այնքան քարանց, խարըխաց և նաւուց կտորներէն, որ 500 տարիէ վեր խրոսած մնացել և նաւարկութեան արգելք էին. իսկ այն փոխ առած կամ գնած ճոպանները՝ որովք իր գործը կը կատարէր, շատ հեղ բնկղմած նիւթերը վեր քաշելու ատեն, չարածնիկ գործաւորք՝ ի թշնամեաց զրգեալ՝ կը կտրէին ջրփին մէջ, և կրկին փնտս կ'ընէին, թէ աշխատանքն ալ կրկնել տալով՝ և թէ ճոպանաց գինը ի զուր տուծել տալով: Նաւահանղըտը մաքրելէն զատ, անոր մէջ նաւապետաց չի ոխալելու համար դրուած նշան.

1. Իր վարքային համար ծախսած գումարն 3500 դուկատ՝ ստակին նիւթական արժէքով 10,700 Ֆրանգ կ'ընէ, բայց այն ատենուան յարգով՝ գուցէ կըրկին՝ կամ գոնէ կէս մ'ալ աւելի կ'արժէր, այսինքն 20 կամ 15,000:

ներն ալ (signali) հինգած և փտած ըլլալով, ինքն հաներ. և նոր զրեր էր, ամէն մէկուն համար (որ 18 էին) քսանական զուկատ ծախք ընելով: Կը յիշէ նաև նոյն ատեններ լտանգուած խալէ մի, որ ջուր առնուլով ընկըր-մելու վրայ էր, և ուրիշներն աշխատելով չէին կըրնար յաջողիլ, իսկ ինքն իր ճարտարութեամբ ազատեց: — Դուքսն՝ ըստ սովորութեանն պատուիրեց Նաւարանին գլխաւորաց, որ Անտոնի աղերսին պատասխան տան. ասոնք քա-նի մ'ամիս վերջ (19 օգոստ 1569) խոստովանեցան որ իրաւ Անտոն պար-տական էր իրենց վերոյիշեալ գումարը (882 զուկատ, 500ն իրենցմէ ա-ռած նաւակի և գործեաց համար, 382 ալ իր վարքային համար), նակայն շատ ալ արդիւնք ունէր, թէ ընկղմած բաները հանելուն համար, և թէ իր քրտակէն աշխատաւորաց վարձքը վճարելուն համար, որով ինքն աղքատացաւ. արդ « այսպիսի հանձարեղ և արդիւնեւառոր մարդ » (Person d'ingegno e di valore) արժանի է շնորհաց, և յետ դարձնելու իրեն իր վարքայն, Երեւակոյտն վճռեց (ի 12 նոյեմբ.), որ վարքայն և գործիքները զարձընեն տան առ Անտոն. սա ալ իր պարտքը վճարէ թէ Կալէոնէն և թէ ուրիշ նաւերէ հանած բաներով, բայց նախ իր ծախքը հանէ, յետոյ այն հանած նիւթերուն երրորդ մասովը վճարէ:

Այս վճռով ստացաւ Անտոն իր գործիքը և փորձունութիւնը. նորէն հա-նած նաւերէն կը յիշուին՝ մէկ մի Տէլլա Վեզզիա Անտոն կոչուած նաւա-պետինը (Antonio della Vecchia). մէկ Շիլառնցի կամ Շիլառնիա ը-ստած նաւ մի. մէկ մ'ալ Մարչիլիան մի (Marcelliana). (այսպէս կոչուէ-ին Աղբիական ծովու մէջ բանող նաւք), որ մարմարին քարերով ծանրա-բեռնեալ էր. մէկ մեծ նաւակ մ'ալ (burchio) կապարով լցուած և ընկըր-մած էր Նոր բերդ (Castel-novo) կոչուած ծովեզերքը: Ասոնց երբ և ինչ կերպով կամ խնդրով հանուելուն վրայ յատուկ տեղեկութիւն ծանօթ չէ, ինչպէս ուրիշ երկու նաւուց, Ասոնց մէկն էր Կիպրացի նաւ մի ի սկիզբն 1573 տարւոյ՝ որոյ մէկ մասին տէր էր Պետրոս Մինա անուամբ մէկն, և կը խոստանար իր պարտքը վճարելու՝ երբ նաւն հանուի, իսկ թէ ոչ՝ խնդ-րէր պարտքէն ազատ ճնալ: Անտոն ըստ սովորութեանն խնդրեց ի Երեւա-կուտէն որ Նաւարանն շնորհէ իրեն հարկաւոր նիւթեր և ինքն հանէ զնա-ւըն, և յետ դարձընէ առած նիւթերը, Հաւանեցաւ ատեանն և պատուի-րեց Նաւարանի գլխաւորաց՝ որ հաշուեն Անտոնի հարկաւոր եղած հին և նոր նիւթոց գինը. անոնք հաշուեցին մէկիկ մէկիկ նշանակելով և գումարե-ցին 1280 զուկատ. որոց 400 զուտ ստակ էր. զոր և վճռեց Երեւակոյտն (17 յունիս) տալ Հայ կոչուած հաշատարիւմ Սուրեան Անտոնի⁽¹⁾, Բայց խնդիր մ'եղաւ թէ արդեօք պէտք է տալ զասոնք՝ առանց զրաւ մի առնելու ուզո-ղէն. յետ երկար վիճման՝ որոշուեցաւ վճիւր հաստատ պահել, որովհետեւ օրէնքն որոշ բան մի չէր սահմանած այս բանիս: Կ'երեւի թէ Նաւարանի պաշտօնեայք կը զփութէին այս գումարը տալու. անոր համար ծերակոյտն

1. Al fedel Suriano Antonio detto Armeno.

փերրուարի 10ին հրամայեց որ նիւթերը տան, իսկ 400 դուկատն արուփ տէրութեան գանձէն, փոխարէն Սնտոնի ինչուան հիմայ ըրած և ասկէ ետեւ ընելու ծախուց և աշխատութեանց՝ նաւը հանելու համար: Բաւական ժամանակ պէտք եղած է այս գործն կատարելու. և զեռ չէր վերջացած, երբ նոյն տարուան հոկտեմբեր ամսոյն (3ին) վճեց ատեանն՝ որ ընդունուի Պետրոս Մինայի պայմանական խնդիրը:

Երկրորդ նաւն Կիրանտա (Ghiranda) կամ Կիրարտա կոչուէր, և 1579ին մայիս ամսոյ կամ յունիսի սկիզբը՝ խրուած էր նաւահանգստին մէջ. թէպէտև ապահովագրուած էր, բայց ապահովագրողը չուզեցին հանել լը յանձն առնուլ. այս գործն ալ կը վայելէր արթուն և պատրաստ Սնտոնի, որ ի 5 յունիսի աղերս և ցանկ մ'ալ տուա իրեն հարկաւոր նիւթոց և 400 ալ դուկատի, զայն հանելու համար 15 օրուան մէջ, եթէ ալէկոծու թիւն չըլլայ: Երբակոյտն նաւահանգստին արգելքը վերցընելու համար՝ վրձուեց որ շուտով տրուի Սնտոնի ուղածը. և երբ հանէ նաւը, միջի եղածն ապրանքներով գնահատուի, և գինն յանձնուի տէրութեան, որպէս զի ապահովագրողը և ընչից տեսքը մաս մ'առնուն, մաս մ'ալ գործողութեան ծախուց համար ըլլայ, բաժին մ'ալ Սնտոնի տրուի. իսկ նաւապետն և գործակիցքն քննուին, և ով որ յանցաւոր է պատժուի: Սնտոն այս նաւու մեծամեծ կտորներէն զատ՝ միջէն հինգ խարիսի և շատ նիւթեր ալ հանեց:

Դեռ շատ տարիներ ալ աշխատեցաւ Հայն թէ նաւահանգիստը մաքրելու՝ յօգուտ տէրութեան, և թէ առանձնականաց նաւերը և ապրանքը հանելու ի ծովէ. բայց թուականով և մի առ մի չեն յիշուիր գործերն. այլ այս յայտնի է՝ որ աշխատանքն և քանքն իր կարողութենէ և հասարակաց երախտագիտութենէն վեր էր. անոր համար յետ այնքան աշխատանաց և յալուղութեանց՝ կը ստիպուէր շահածէն աւելի ծախսել և պարտքի տակ մնալ: Այսպէս Կիրանտա նաւուն հանելէն զբեթէ տասն տարի վերջը (1588) նոր աղերսագրով մի (22 յունիսի) կ'իմացընէ, որ իր վարքայն ոչ միայն դարձեալ գրաւուած էր ի Նաւարանին, այլ և պաշտօնեայքն չարաչար գործածեր էին, և ինչուան ծովակին յատակը փորելու և տիղմ հանելու, որով զբեթէ փնացուցեր էին զայն. Այս բանս զիս կը տանջէ, կ'ըսէր. վասն զի ես անով տէրութեան նաւահանգիստը մաքուր կամ ազատ կը պահէի (Io teneva netto il Porto di V. Serenità), ինչպէս որ շատ վիայաբազրեւորով կրնամ ցուցնել: Այդ կը խնդրէ որ վարքայն տեսող բանիբուն մարդիկ՝ գնահատեն զայն, նոյնպէս այն նիւթեր ալ՝ որ ինքն հաներ և Նաւարանին մէջ թողեր էր, վրանին A գիրը նշանելով, իր Armeno (Հայ) կոչման առաջին տառը. և անոնց գնոյն երրորդ մասով վճարուի իր պարտքը, և մնացածովն խեղճն կարենայ քիչ մի « հանգիստ շունչ առնուլ¹⁾», յետ

1. Affinche io infelice dopo tante fatiche, affanni et calamità possi respirar, et haver commodità di far alcuna provvisione utilissima a V. Serenità.

» այնքան աշխատանաց, հոգոց և վշտաց, և նորէն տէրութեան օգտակարաւ » գոյն բան մի ճարել » :

Դերակոյտն ինչպէս որ կը վայելէր՝ պատուիրեց Նաւարանի հոգցողաց և զլիաւորաց, որ արդարապէս քննեն Անտոնի աղերսը, և իրենց ստորագրութեամբ և երդմամբ ծանօթութիւն տան : Այսպէս՝ բրին, և (յուլիոյ 9ին) գրով ծանուցին որ Նաւարանի գրոց մէջ նշանակուած են Անտոնի պարսնի, այլ ամեն պահանջն որոշ չեն իմացուիր. վասն զի վերջերս Նաւարանն իրեն տուեր էր երկու արսիլ (որ է խալէի միջուկը, առանց կազմածի,) և իրեն հարկաւոր եղած նիւթեր. Անտոն զաստիճ տարաւ ի նաւահանգիստ, հօն հիւանդացաւ և զարձաւ իր տունը. հոգցողք ալ արսիլները ի նաւարան դարձուցին, որոց մէջ զատ այլ նիւթերէ՝ կային Անտոնի յատուկ ինչք ալ. բայց ասոնցմէ իրեն տրուածն և պահուածն որոշ նշանակուած չեն. այսպէս ալ Լիտոյէն (ծովեզերքի երկայն կղզիաձեւ աւազատեղի), բերուած հրեաներ և այլ նիւթեր, որոց մաս մի նա իր տունը տարեր էր, կան նիւթեր ալ որոց վրայ Ա տառն նշանակուած է, բայց ուրիշ վկայութիւն չկայ թէ իր հանածներն են. որով՝ այս նիւթերէն ոմանց ստոյգ իրեն ըլլալն յայտնի են, ոմանք ալ քիչ մի կարծեօք : Վարքայն՝ իրաւ որ այլեւայլ բանի գործածուելով՝ փնայած է, և իրաւունք ունի Անտոն որ վճարուի իրեն՝ երբ ծախու հանուի : Միով բանիւ, խնդիրս բոլորովին պարզ չէ. որովհետեւ այս մարդս (Անտոն) « որ շատ բան ըրած է յօգուտ հասարակաց », լեզուի և առևտրի անվարժութեամբ և հիւանդութեան պատճառաւ՝ չէ կրցած հարկաւոր եղած խնամքով գործել. որով երկու կողմն ալ իրաւացի կ'երևի, թէ իր պարտքը պահանջելն և թէ իրեն շնորհք ընելու իբրեւ կարեւոր խնդիր՝ Դուքսըն յանձնեց զայս քննելու Գիտունք կոչուած բարձրագոյն ատենից, և յետ երկու ամսոյ (17 սեպտեմբ.) վճռեց որ Նաւարանի վեց զլիաւորքն արգարութեամբ և 4 քուէով (ի վեցէն) Անտոնի պահանջքը վճարեն. բայց և ծախուած կամ գնահատուած իրաց հաշիւը ցուցընեն Դերակոյտին, որ վերջնական վճիռը տայ : Այս վերջին վճիռը և գործոյն ինչպէս աւարտուիլը՝ չեմ գտած ի դիւանս. այլ թէ հոգցողաց զրածէն և թէ Դերակոյտին դիտմունքէն անտարակոյս է որ չափաւորապէս զօհացուցած են զԱնտոն : — Ասկէ ետեւ որ իր կենաց վերջի տարիներն է, նաւահանութեան խնդիր կամ ծանօթութիւն չկայ :

Սակայն մեր Հայն ոչ միայն ճարտար էր նաւահանութեան կամ ծովուն յափշտակածը իր խոր ծոցէն դուրս հանելու, և անոր յատակը փորելու (որոյ համար գործիքներ ալ շիներ էր), այլ ուրիշ և աննման բաներուն մէջ ալ ցուցած է իր հարուստ հանճարը, թէ և կենաց և գործոց անծաղոյն մասն՝ նաւու և ծովու վրայ և խորը եղած է, այլ և ի վերայ ծովու, և շատ մեծ ու նշանաւոր և արաւոր տեղոյ և գործոյ մէջ հնուու ի վերնետեղ . գործ՝ որ այն դարուն (ԺԶ) այլ և ընդհանուր պատմութեան մէջ ամենէն երեւելի դիպուածոց մէկն է. և որոյ վրայ երկարել մեզի չի վայելեր. այլ պատմա-

գէտն կըրնայ յիշել և երեակայել 1571 հոկտեմբերի 7ին հանդիպածը ծովու վրայ. ուր եթէ անծանօթ բան մի կայ՝ այս է, որ այն օր (որ իրաց մեծութեան համար վենետիկցի դիւանաց և զրուածոց մէջ, նաև ուրիշ ազգաց մէջ ալ, յատկապէս Այն Օրն կամ մեծ օր կ'ըսուի, առանց ուրիշ թուականի), այն օր և այն ահեղ գործողութեան մէջ գտուեր է մեր Անտոնն ալ, թէ ոչ իբրեւ նաւապետ կամ զօրապետ, այլ իբրեւ զինուց յարմարցընող և նաւուց հոգացող, ինչ հոգ և պէտք որ կըրնայ ըլլալ այն առթիւն. նախ վենետաց մեծամեծ խալէից կողերուն վրայ այնպէս պատշաճ և ճարտարութեամբ շարեց հրետները՝ որ ամէնքը զարմացուց. և երբ նաւամարտին սաստիկ ընդհարման ատեն՝ խալէից մէկն մեծ պատառուածք մ'ունեցաւ և ընկըմբելու մտանգի մէջ էր, Անտոն կարկատեց, միացուց ապրեցուց նաւն ալ նաւաստիքն ալ: Եթէ միայն մեր Հայն էր այն կենաց և մահու ճգնաժամին՝ այսպիսի գործեր ընող, իբրեւ վենետաց յաջողութեան մասնակից՝ կըրնային իրմով պարծիլ ուրիշ Հայք ալ, իսկ եթէ ուրիշներ ալ կային (հաւանօրէն) Անտոնի գործակից, անով իր արդիւնքն և ճարտարութիւնն յի նուազիւր. մանաւանդ որ յայտնի չէ, զոնէ մեզի, ուրիշներուն ըրածը. իսկ Անտոնին ըրածը՝ իր օրդին իբր 40 տարի վերջը՝ համարձակ զրով հրատարակած է Դքսին և Երեքակուտին առջեւ, ուր անստոյգ և անծանօթ բան մի չէր կըրնար հռչակուիլ: Եթէ Անտոն Հայ չըլլար՝ զուցէ վենետք իրենց հայրենակցի մի այսպիսի գործը կը հռչակէին. իսկ եթէ չեն հռչակած վենետիկեցւոյ այնպիսի գործ՝ իրենց լուծիւնն ալ վկայութիւն մի կ'ըլլայ հայրասէր որդւոյն վկայութեան, որ կը համարձակի իսկ ըսելու Հասարակապետութեան առջեւ թէ Անտոնի այն ինչուան այն ատեն չտեսնուած գործն՝ բերաւ զարմանալի օգուտը, որ յայտնի եղաւ այն հրաշալի պատերազմին մէջ⁽¹⁾:

Բայց Անտոնի ճարտարութիւնն միայն հրետները յարմարապէս շարելու մէջ չէր, այլ վստահ էր նաև յարմարագոյն կամ հօրագոյն հրետներ շինել. և ճիշդ տարի մի յառաջ քան զմեծ օրն, երբ հաւանօրէն անոր համար պատրաստութիւնք կ'ըլլային, ինքն առաջարկեց՝ վենետաց և թերեւս ուրիշներուն ունեցած հրետներէն՝ կիսով չափ աւելի հեռաձիգ հրետներ շինել. Տասանց զադոնապահ բարձրագոյն ատեանն շատ յօժարութեամբ և իբր յարմար առթի՝ ընդունեցաւ առաջարկը, և պատուիրեց (6 սեպտ. 1570) Նաւարանի հոգեղաց և գլխաւորաց՝ որ տան Անտոնի մեռաղ և ուրիշ պէտք եղածը, որպէս զի շուտով փորձի համար հաստ մի շինէ, և ըստ այնմ վճիռ տայ ատեանն: Բայց ամիս մի վերջը (13 հոկտ.) նոր հրամանով պատուիրեց՝ որ ի կախ թողուն առջի հրամանը, ծանօթ պատճառաց համար, որ մեզ անծանօթ են, մինչև առ նոր հրաման. ըսել է որ չէին արգելած Ան-

1. Nella Giornata felicissima mostrò l'accomodar l'arteglierie alle bande delle Galere grosse, non più vedute, che apportò il mirabil beneficio ch'è stato palese in quel miracoloso conflitto.

տոնի գործը, այլ առ ժամն յետ թողեր էին⁽¹⁾։ Իսկ յետոյ ի՞նչ եղաւ, յայտնի չէ, հաւանօրէն տէրութիւնն մեծ հոգով և վախով պատրաստուելով ի նաւազինութիւն իր Գաշնակից պետութեանց հետ, նոր փորձի ժամանակ չունէր, և երբ յաջողութեամբ վճարեցաւ այն մեծ Օրուան գործն, ալ փոյթ չունեցաւ իր հրեաները մեծցնելու, և ասկէ 300 տարի առաջ կանխելով Հայ Քրուպ մի ընծայելու։

Յիշենք այս անդ անցողաբար, որ այս հրետաշինութեան արուեստին մէջ Պնտոնէն շատ յառաջ (1540ին), Հայ երիտասարդ մի իր ազգին բարեկամ, է մեր արդէն յիշեալ (էջ150) Շահ Իսմայէլի պատերազմաց ատեն՝ ընդդէմ Խոսրոսի թուրքմանաց, Հըսնէյֆի պաշարման և ումբակոծութեան ատեն, միաձոյլ մեծ հրետ մի շիներ էր, բերանն հինգ թիզ լայնութեամբ, ինչպէս վըկայէ նոյն դարուն վիենետկեցի ճամբորդ պատմիչ մի։

Պնտոն՝ որ այսպէս երբեմն (ծովուն) ջրոց մէջ կը ցուցնէր իր հնարագիտութիւնը, երբեմն հրոյ գործեաց և գործոց մէջ, երբեմն ալ այս երկու տարերաց կուռոյ մէջ մտաւ, և մէկով մէկալին յաղթեց։ Միայն յարեւելս չէ որ հրդեհք պատահին, այլ շատ հեղ և յարեւմուտս։ Պնտոնի ժամանակ ալ ի վիենետիկ քանի մ'անգամ պատահեցաւ. մէկ մի ի Նաւարանին, 1569ին (սեպտ. 13), որոյ ատեն ինչն եղաւ առաջիններէն մէկն՝ վտանգաւ անձին՝ կրակը մարելու գործոց ձեռք դարնելու. նոյնպէս ըրաւ քանի մի տարի վերջը՝ Դըսին պաշտառն մէջ հանդիպած կրակին, հաւանօրէն ի 11 մարտի, 1574ի, զուցէ անկէց առաջ (1572. փետր. 24), և անկէ վերջ (1577) և ուրիշ անգամներ ալ. ասոնք իբրեւ նշանաւոր դէպք կամ հրդեհք նշանաւորած են ի վիենետիկեան տարեգիրս։

Ջրոյ և հրոյ հասուցած վտաններէն աւելի մեծ և ահաւոր վտանգ և հարուած մի կայ մարդկան, որ ինչպէս աւելի ուղղակի կըրնանք բռնել թէ Աստուծոյ կու գայ, այսպէս ճարն ալ յԱստուծոյ է, բայց մարդկան հնարագիտութիւնն ալ կ'օգնէ և շատ կամ քիչ կ'ազատէ. այն հարուածն է Սրահմաթիւնն, այսինքն՝ ժանտախտն. որ քանի մ'անգամ ինչպէս Եւրոպայի ուրիշ կողմերը՝ ի վիենետիկ ալ հանդիպած է, և մինչեւ քաղաքին բնակչաց երրորդ մասն ջարդած է. (հիմայ այս քաղաքն 140,000ի չափ բնակիչ ունի, հասարակապետութեան ժամանակ 200,000 ալ եղած է)։ Պնտոնի ատեն ալ ահաւոր սրածուրիւն մ'եղաւ, սկսեալ ի 21 յուլիս 1575 տարւոյ, և իբրեւ հրաշքով դադարեալ համարուի ի 21 յուլիս 1577ին, որ օր ուխտաւք և թափօրով բոլոր քաղաքն և պետութիւնն առ Աստուած դիմեց, խոստանալով և յետոյ կանգնելով Ս. Ազատիչ (Redentore) կոչուած մեծ և աննման եկեղեցին, զերահայակ Պալլագիոնի ճարտարապետութեամբ, որ և յանձնուեցաւ և մինչեւ հիմայ կայ ի խնամն վեղարարոյ (Պարուլին) միանձնաց, որք հոյակապ տաճարին մօտ գծուծ վանաց մէջ բնակին։ Այս ա-

1. Sia sospesa... sin ad altro ordine.

հաւոր մարգածախ ժանտախտի ատեն ցուցուց Անտոն՝ թերեւս իր ամենէն օգտակար ճարտարութիւնը: ոչ մեծամեծ մեքենաներով ծովու ալեաց և ան-
դընդոց դէմ կռուելով, այլ փոքրիկ և անծանօթ նիւթով մի ընդդէմ սրա-
ծութեան. հնարեց դեղ մի, որոյ գաղտնիքը իրեն պահեց, այլ անով « շատ
վիրաւորեալներ բժշկեց և շատ ազնուական ընտանիք ապրեցուց » . (Libe-
rò tanti feriti, et risanò tante famiglie di Nobili). Տէրութիւնն
յանձնեց իրեն յատկապէս քաղքին մէկ թաղին (d'Osso duro, էարծր ու-
կըր) հիւանդները հոգալու, որոնց համար Անտոն իր դեղի հետ ուրիշ գեղոց
ծախքն ալ վճարեց, և աղքատաց կարօտութիւնը լրցուց իր ստակով, ձրիա-
պէս, ճարտարութենէ աւելի. Բարեբաբ ըլլալով:

Տէրութիւնն թէ և շատ անգամ համարմունք ցուցած էր Անտոնի և հա-
ւանած անոր խնդրոց, բայց՝ ինչպէս առաջ ալ յիշեցինք, ոչ առատապէս
վարձատրած, կամ ինչպէս պաշտօնեայք ցուցին (1588), Անտոն որքան որ
սրամտութիւն ունէր հասարակաց օգտի գործոց համար, իրեն ապրուստին ա-
պագայն չէր ապահովցընէր, և յուսով կամ բարեմտութեամբ՝ նոյն հասա-
րակաց համար իր քովէն շատ ծախքեր ընելով⁽¹⁾, և փոխարէն չգտնելով՝ ի
նեղ ընկաւ իր տնտեսութեան, մահաւանդ վերջերը հիւանդութեանց ալ պատ-
ճառաւ: Իր կենաց վերջի յիշատակն ի զիւանս՝ նօտարական գրուած մ'է
(1591, ապրիլի 5ին). ուսկից կ'իմանամք որ այն ատեն կը բնակէր քաղ-
քին Ս. Մարտինոս բնուած թաղը (որ Նաւարանին հեռու չէ), Ծուռ Ը-
ստած կամըրլին քով (Ponte Storto), ազնուականի մը (Բեռնարդ Տրեւիզան,
Trevisan) տուն կամ տան մաս մի վարձած 60. դուկատի - ուսկից 36
դուկատ պարտք ունէր տանտիրոջ, որ անոր ուրիշ տեղ մի գրաւ դրած 20
դուկատը՝ իրեն գրաւ առաւ. իսկ յիշեալ թուականին (5 ապրիլ, Ֆրիւրին
անուն) նօտարի առջեւ պարտատէր և պարտական իրաւախոհ եղան, որ Անտոն
ինչուան ամսոյն 21 իր պարտքը վճարէ, Բեռնարդ ալ գրաւը յետ դարձը-
նէ, և թողու որ իր վարձուրը դարձեալ բնակի իր տան մէջ մինչեւ տար-
ւոյն վերջը 34 դուկատ վճարելով:

Բայց տարւոյն վերջին չհասաւ մեր Հայն. այլ նոր զաշնադրութենէ քա-
նի. մ'ամիս ետքը, ի 22 օգոստոսի, վախճանեցաւ նոյն տան մէջ, տան օր
թանչ-ախտով հիւանդացած, 58 տարուան, ինչպէս կ'իմացընէ մեռելագիրքն⁽²⁾.
Թողուլ այրի կնկան հետ վեց ալ դասակ. ուսկից կ'իմացուի ալ որ աղ-
քատապէս թաղուած է նոյն թաղին եկեղեցւոյն մէջ կամ քովը: Եթէ Ան-
տոն իր ժամանակակից կամ աւելի վերջը եկող ազգային վաճառականաց շա-
հասիրութիւնն ունենար, անտարակոյտ շատ հարուստ կըրնար ըլլալ, այնքան
ճարտար և մեծամեծ գործերովը. սակայն ինքն աւելի ուրիշի օգուտ քան

1. Fece infinite spese del suo particolare, senza havere alcuna reintegratio-
ne. Այսպէս գրէր իր որդին առ Դուքան, աղբրեւելով:

2. Messer Antonio. Armeno d'anni 58, amalato da Fluxo, già giorni 10. Sta
zò del Ponte Storto, nelle Case di Cha Trevisan. Licentiatò.

առանձին շահը դիտելով՝ քիչով շատացեր է, 40 տարի զոհթէ անզաղար աշխատելով և միշտ զոյելի, արդար և ճարպիկ վկայուեր է. վկայութիւն՝ որ շատ աւելի փառաւոր է քան մեր վաճառականաց ի վենետիկ շահածն և կորուսածն: Ինքն իսկ Անտոն այսպէս կը մտածէր, ըստ վկայութեան իր որդւոյն՝ վերջին աղերսագրին մէջ, թէ՛ փառաւոր մահ կը համարէր իր աշխատութեանց ժառանգ և երախտաւոր թողուլ իր զաւակները. (Si riputò di morir glorioso con lasciarme con cinque altri miei fratelli heredi et benemeriti delle sue fatiche). Միայն թէ կը վայելէր որ այսպիսի Հայ մի, որուն արդիւնքը կը թողում զատելու ընթերցողաց, ինչպէս իր կենդանութեան ատեն, անկէ վերջ ալ ծանօթ և զարմանալի ըլլար այն քաղաքացեաց, որոց՝ նախ օտարական յետոյ քաղաքակից ըլլալով՝ այնչափ երախտաւոր և բարերար եղաւ. բայց եթէ վենետիկ միայն իրենց մոռացեալ Դիւանաց մէջ կը պահեն Անտոնի յիշատակը, ասոր ազգայինք 300 տարի վերջը իբրեւ յարութիւն տալով և եռադարեան յորեւիտան համարելով իր մահուան թուականին (1594—1894), անմոռաց աւանդեն զայն իր և մեր հայրենեաց:

Շարայարեչի

ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՅԵՒՐՈՊԱ

(Տես թէջ 109)

Ջրգես երեք տարուան արձակուրդի հրամանէն ետքը չդառնալով ի փարիզ, իր փոխանորդն Պաւղոս Էմիլ Լըվայեան տը Ֆլորիվալ (Levailant de Florival) 1830 սեպտ. 4 հրամանագրով մը հայ լեզուի ուսուցիչ զրուեցաւ: Հրովարտական դպրոցին (Ecole des Chartes) ու յետոյ Արեւելեան կենդանի լեզուաց վարժարանին մէջ իր ուսմանց ընթացքն աւարտած էր (1824—23), ու 1831ին համառօտ զրուածք մը հրատարակած հետեւեալ խորագրով. « Ուղղափառ Հայոց դէմ 1828ին ի Էդստանպոնուպոլիս տրուած հալածանաց պատմութիւն » . (Exposé des persécutions exercées en 1828 à Constantinople contre les catholiques Arméniens:

Հրատարակեց դարձեալ երկուսասաներորդ դարու հեղինակ՝ Միխիթարայ Գօշի առական գաղղիական թարգմանութիւնն, ու Միխիթարեան ուխտին հիմնարկութեանն ու նպատակին վրայ համառօտ երկասիրութիւն մը: Փափաքելով ուղեւորութիւն մը ընել ի Հայաստան, 1834ին արձակուրդի հրաման խնդրեց. բայց վենետիկոյ սրբոյն Ղազարոս կղզիէն անդին առաջ չերթալով, հոն քիչ մը առեն զեգերեցաւ հայկական ուսումը կատարելագործելու դիտ-